ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Օշական, 23 յունվարի

Ինչպէս յայտնի է, Օշականի ս. Մեսրոպեան դպրոցի հոգաբարձութիւնը տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանի առիթով որոշել է Օշականի երեքդասեան դպրոցը դարձնել չորսդասեան, շինել մի նոր յարմարաւոր շէնք և դպրոցի գաւթում կանգնեցնել ս. Մեսրոպի կիսանդրին։ Այդ առիթով յայտնված է շատ հիմնարկութիւնների, ընկերութիւնների և նշանաւոր անձանց, որոնցից օգնութիւն է սպասվում։

Էջմիածնի միաբան Սահակ վ. Ամատունին՝ նախանձախնդիր լինելով այդ նպատակների իրականացմանը՝ Օշականի դպրոցին է նուիրել 100 օրինակ իր աշխատութիւնից՝ «Հայոց բառ ու բան», որի համար հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի կողմից յայտնում եմ խորին շնորհակալութիւն։

Այդ գրքերը պիտի ծախվեն վերոյիշեալ նպատակներն իրագործելու համար։ ով յարգում է մեծ մարդու՝ ս. Մեսրոպի անմահ յիշատակը և կամենում է գնել, խնդրում ենք դիմել Օշականի ծխական հոգաբարձութեան։

Աւագ-ուսուցիչ՝ Արամ Աղաջանեան